ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1959 Общественные науки

Ա. Մ. Նզիազարյան

ՀԱՅ ԼԵԳԱԼ ՆԱՐՈԴՆԻԿ ՍՏԵՓԱՆ ՂՈՐՂԱՆՅԱՆ

1. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՍԵՐՈՒՄԸ ԼԻԲԵՐԱԼ ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ճորտատիրական իրավունքի անկման 50-ամյակին նվիրված իր հոդվածում Վ. Ի. Լենինը նշում է, որ աշխարհում ոչ մի երկրում գյուղացիությունը, անդամ իր «ազատագրումից» հետո, չի ապրել այնպիսի քայքայում, այնպիսի աղքատացում, այնպիսի սարսափում, այնպիսի անարգանք, ինչպես ցարական Ռուսաստանում։

60-ական թվականներից հետո, հետևաբար՝ հետագա շրջանում — Ռուսաստանը թևակոխեց իր զարգացման կապիտալիստական փուլը, սակայն այդ զարգացումը, ինչպես հայտնի է, ժամանակակից տեխնիկայի և կուլտուրայի մակարդակի տեսակետից դանդաղ էր ընթանում։ Այդ դանդաղ ընթացքը հետևանք էր ճորտատիրական մնացուկների, երկրում մնացած հին հասարակությունների, որոնք կապիտալիզմի հետ անհամատեղելի են. ետ են գցում նրա զարգացումը, անչափ վատթարացնում են գրությունն արտադրողների, որոնք տուժում են թե՛ կապիտալիզմից և թե՛ կապիտալիզմի անբավարար զարգացումից»[1]։

60-ական—70-ական թվականների Ռուսաստանի էկոնոմիկայի այդօրինակ անզարգացությունը առաջացրեց գյուղացիական սոցիալիզմի գաղափարախոսությունը, որը հիմնվում էր երկու հիմնական դրույթների վրա կամ ավելի ճիշտ, ռեոլյուցիոն նարոդնիկների տեսարանների երկու բնույթի հավատի վրա. առաջին՝ «հավատը դեպի գյուղացիական անտեսության առանձնահատուկ կացութաձևը, դեպի համայնքը, որպես սոցիալիզմի սաղմ և բաղադ և երկրորդ՝ «հավատը, թե հնարավոր է կապիտալիզմի ուղուց խուսափել անհապաղ սոցիալիստական ռեոլյուցիայի միջոցով, որին արդեն պատրաստ է ժողովուրդը»[2]։

Այս երկուսային դրույթներից էր բխում ռեոլյուցիոն նարոդնիկների քաղաքական ծրագիրը — ոտքի կանգնեցնել գյուղացիությունը և ռեոլյուցիայի միջոցով տապալել ցարական ինքնակալությունը, որը հանդիսանում էր այն ժամանակի հասարակական հիմքերի պաշտպանը։ Սա էր ռեոլյուցիոն նարոդնիկության տնտեսագիտական և քաղաքական credo-ն։

Հայտնի է, որ ռեոլյուցիոն նարոդնիկությունը 80-ական թվականների սկզբին մահացու հարված ստացավ ցարական ինքնակալությունից։

Ի՞նչ էվոլյուցիա ապրեց դրանից հետո ռեոլյուցիոն նարոդնիկությունը։

---

[1] Լենին, Երկեր. հատ. 3. էջ 781։
[2] Նույն տեղում, էջ 114։

Երկու տասնյակ տարիներ էին անցել գյուղացիական ռեֆորմից, բայց արմատապես փոխվել էր Ռուսաստանի տնտեսական պատկերը. լայն ծավալ էր ստացել ապրանքային արտադրությունը, նա դարձել էր տնտեսական զարգացման հիմքը, նա վեր էր ածվել կապիտալիստական ապրանքային արտադրության։ Գյուղը երկճեղքվել էր, տալով մի կողմից՝ պրոլետարիատի մասսա, մյուս կողմից՝ կուլակների, գյուղական համայնքը կապիտալիստական վերասերման էր ենթարկվել։

Ահա այդ սոցիալ-տնտեսական իրադրության մեջ երկճեղքվել էր նաև, ինչպես Վ. Ի. Լենինն է նշում, «հին ռուսական գյուղացիական սոցիալիզմը՝ տեղ տալով մի կողմից բանվորական սոցիալիզմին, մյուս կողմից՝ այլասերվելով քաղքենիական գռեհիկ ռադիկալիզմի։ Այդ փոխակերպումն այլ կերպ չի կարելի անվանել, քան այլասերում»[3]։

Եվ իրոք, 80—90-ական թվականների նարոդնիկներն այլևս չէին կարող ժխտել Ռուսաստանի կապիտալիստական զարգացումը, ինչպես նաև չէին կարող ժխտել գյուղական համայնքի մեջ «ալտրուիզմի» բացակայությունը։ Բայց միաժամանակ այդ լեգալ նարոդնիկները չէին կամենում տեսնել Ռուսաստանի «բոլոր արտադրական հարաբերությունների բուրժուական բնույթը» թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության և թե՛ տնայնագործության մեջ, չէին կամենում տեսնել դասակարգային պայքարի առկայությունն ու անխուսափելիությունն այն ժամանակվա Ռուսաստանի հասարակական պայմաններում։

Այստեղից էլ բխում էր, Լենինի դիպուկ բնորոշումով, այն «ջրային էկլեկտիզմը», որը հատուկ էր ռուս լեգալ նարոդնիկությանը։

Ի տարբերություն ռևոլյուցիոն նարոդնիկության քաղաքական ծրագրի,— ոտքի հանել գյուղացիությունը սոցիալիստական ռևոլյուցիայի,— լեգալ նարոդնիկությունը կառչեց մի այնպիսի ծրագրի, որի նպատակն էր «կարկատել», «բարելավել» գյուղացիության դրությունը՝ պահպանելով ժամանակակից հասարակության հիմքերը։

90-ական թվականներից սկսած լեգալ նարոդնիկության տնտեսագետ գաղափարախոսներ՝ Յուժակովը, Կրիվենկոն, Նիկոլայ-ոնը, Վ. Վարանցովը, որոնք համախմբված էին „Русское богатство“ ժուռնալի շուրջը, առաջադրում էին այնպիսի ծրագրային պահանջներ, որոնց բովանդակությունը հենց ժամանակակից հասարակության շրջանակում գյուղացիության դրության կարկատելն էր, կամ չակերտավոր բարելավումը։ Այդ պահանջներն էին. գյուղացիական բանկի վերակազմություն, էժան վարկ, գաղութացման վարչության հիմնադրություն, պետական հողերի կապալի կարգավորում՝ հոգուտ ժողովրդական տնտեսության, կապալի մշակումն ու կարգավորումը, գյուղական համայնքի ազատագրումը խնամակալությունից, անցումն՝ հասարակական վարուցանքի, հողից հանած հումքի համայնական մշակման զարգացում, վաճառահանության ապահովում, ավելի արժան շարժիչների և այլ տեխնիկական բարելավումների հայտնագործություն, վերջապես գյուղատնտեսական թանգարանների, պահեստների և կոմիսիոներական գրասենյակների կազմակերպում։

[3] Լենին, Երկեր, հատ. 1, էջ 323։
[4] Նույն տեղում, էջ 327։

Ինչպես տեսնում ենք, 90-ական թվականների ռուս նարոդնիկ տնտեսագետների վերը բերած պահանջները, կամ ցանկալի ձեռնարկումները պետք է իրականացվեին այն ժամանակվա հասարակարգի սահմաններում, կամ ինչպես Լենինն էր գրում՝ «պահպանելով ժամանակակից հասարակության հիմքերը»։

Ով պետք է կենսագործեր այս պահանջները կամ ռեֆորմները. լեգալ նարոդնիկ էկոնոմիստները մի պատասխան ունեին դրան. «կուլտուրական հասարակությունը» (իմա՝ մտավորականությունը) և ցարական կառավարությունը։

Ի տարբերություն 70-ական թվականների ռևոլյուցիոն նարոդնիկների, լեգալ նարոդնիկները հրաժարվեցին ռևոլյուցիոն պայքարից՝ ուղղված ցարիզմի դեմ և հաշտություն քարոզեցին ցարական կառավարության հետ։

Օրինական հարց է ծագում. կա՞ արդյոք ռուսական իրականության մեջ սոցիալ-քաղաքական հոսանք, որը նույն պահանջներն առաջադրեր, ինչոր առաջադրում էր 90-ական թվականների նարոդնիկությունը, կամ որը հետապնդեր նույն քաղաքական տնտեսական ծրագիրը, ինչ որ հետապնդում էր լեգալ նարոդնիկությունը։

Այո, կար։ Դա ռուսական բուրժուական լիբերալ հոսանքն էր, այն ռուսական լիբերալիզմն էր, որին ժամանակին խիստ ընդդիմադիր էր եղել ռուս ռևոլյուցիոն նարոդնիկությունը։

Բավական է համառոտակի թվարկել ռուս լիբերալիզմի սոցիալ-քաղաքական, տնտեսական ծրագիրը, որպեսզի համոզվել դրանում։ Ահա Վ. Ի. Լենինի շարադրանքով այդ ծրագիրը. քաղաքական ազատություն, դեմոկրատական հարկային ռեֆորմ, տեղափոխության ազատություն, գյուղացիական դեմոկրատական ագրարային քաղաքականություն, ուղղված դեպի հողային սեփականության դեմոկրատացումը, համայնքից դուրս գալու ազատություն, համայնքը հարկադրական միությունից ազատ միության վերածում. «Պետությունը պետք է աջակցի, որպեսզի հողն անցնի աշխատավոր մասսաների ձեռքը ամբողջ մի շարք ձեռնարկումների միջոցով, ինչպես օրինակ, գյուղացիական բանկի գործունեության ընդլայնում, կայսերական ընտանիքի անդամների հողերի պետական սեփականություն դարձնելը, մանր աշխատավորական տնտեսությունների ստեղծում՝ անհատական կամ կոոպերատիվ հիմունքներով, վերջապես գյուղացիության համար անհրաժեշտ հողերի հարկադրական օտարում կամ պարտադիր հետգնում — «օրինականությունը պահպանելով»։

Այս լիբերալ պահանջները հիմնականում համընկնում են 90-ական թվականների լեգալ նարոդնիկության պահանջների հետ։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը տալով 90-ական թվականների նարոդնիկության էվոլյուցիան, նշում էր, որ «նարոդնիկությունը ճապաղվում էր լիբերալիզմի մեջ, ստեղծվում էր լիբերալ, նարոդնիկական մի ուղղություն»[5]։

Նարոդնիկության այդ ալլասերումն ու քաղքենիական օպորտունիզմ դառնալը Վ. Ի. Լենինը համարում էր 80-ական թվականների վերջի և 90-ական թվականների սկզբների հասարակական կյանքի «ամենաբնորոշ և նշանակալից երևույթներից մեկը»[6]։

---

[5] Լենին, Երկեր, հատ. 7, էջ 114։

[6] Նույն տեղում, էջ 340։

Հին ռեոլյուցիոն նարոդնիկության հիմնական հավատո պատգամները՝ ա. ռուսական գյուղացիության առանձնահատուկ կացութեաձևը և բ. Ռուսաստանում կապիտալիզմի ուղուց խուսափելու հնարավորությունը գյուղացիական ռեոլյուցիայի միջոցով, գյուղական համայնքը սոցիալիզմի սաղմ ու բաղադրիչը լինելը, այս բոլորը Լենինի դիպուկ բնորոշումով «ադոտացել» էին:

Լեգալ նարոդնիկների կողմից առաջին պլանի վրա էր քաշվում ժողովրդական արտադրությունը և նրան զարգացնելու միջոցառումները:

Մանր ժողովրդական արտադրության հասկացողության տակ ռուս լեգալ նարոդնիկներն ընկալում էին գյուղացիական տնտեսությունը և տնայնագործական արդյունաբերությունը: Նրանք ելնում էին այն պոստուլատից, որ՝ «ժողովրդական արտադրությունը մեծ մասամբ բնականորեն է առաջ գալիս», իսկ կապիտալիստականը «ամեն քայլափոխում ստեղծվում է արհեստականորեն (Կրիվենկո)»:

Ինչումն է այդ ժողովրդական մանր արտադրության առանձնահատկությունը և լեգալ նարոդնիկների կողմից ողջունելի գրական կողմերը. նախ՝ որ արտադրությունը մանր է, տնտեսապես ավելի ճկուն, ավելի կենսունակ, և երկրորդ՝ որ աշխատանքի գործիքները միացած են արտադրողի հետ:

Այսպիսով լեգալ նարոդնիկ էկոնոմիստները բացարձակորեն հակադրում էին մանր ժողովրդական արտադրությունը, կապիտալիստական արտադրության և ցատագովում առաջինը: Ավելին, մի ուրիշ նարոդնիկ էկոնոմիստ—Նիկոլայ-ոնը, պաշտպանում էր այն թեզը, թե կապիտալիստական արտադրությունը հակասում է ժողովրդական արտադրությանը և կապիտալիստական արտադրության խոցերը, աշխատանքի ճնշման պատճառը դանվում է կապիտալիստական արտադրական հարաբերությունների ներսում, իսկ ժողովրդական արտադրությունը զերծ է այդ խոցերից, այստեղ շահագործում չկա:

Վ. Ի. Լենինը իր մի շարք աշխատություններում մերկացրեց լեգալ նարոդնիկ էկոնոմիստների այս գոնհիկ սխալն ու նրանց պատրանքները: Լենինը բացահայտեց այն կապը, այն բնդհանուրը, որ կա կապիտալիստական և այսպես կոչված, ժողովրդական արտադրության մեջ, որ նրանք՝ ունենալով իրենց յուրահատուկ գծերը կամ առանձնահատկությունները, ունեն ընդհանուր մի կողմ. թե մեկը և թե մյուսը—ապրանքային տնտեսությունն է, իսկ ապրանքային տնտեսությունը, «ապրանքային շրջանառությունը, կապիտալի ելակետն է»: Հիմք ունենալով Մարքսի այդ դրույթը, Լենինը պնդում էր, որ իր զարգացման որոշ աստիճանում ժողովրդական արտադրությունը կամ պարզ ապրանքային տնտեսությունը վերածվում է կապիտալիստական արտադրության, որ «Կապիտալիզմը ոչ թե «ժողովրդական հասարակարգի հակասումն է, այլ դրա, այսինքն մանր ապրանքային արտադրության, իմա՝ «ժողովրդական արտադրության» ուղղակի մերձավորագույն և անմիջական շարունակությունն ու զարգացումն է»[4]:

90-ական թվականների նարոդնիկության թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական հայացքների պրոպագանդումը օբյեկտիվորեն հետապնդում էր մի նպատակ՝ շահագործվողներին հետ պահել ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ պայքարից:

---

4. Մարքս. «Կապիտալ», հատ. 1, էջ 157:
Լենին, երկեր, հատ. 1, էջ 280:

Լիբերալ նարոդնիկական գաղափարախոսության էվոլյուցիայի պատկերը լրիվ չէր լինի, եթե չնշեինք մի մոմենտ ևս։ 1903 թ. «Իսկրայում» հրապարակած «Նարոդնիկություն անող բուրժուազիան և գլուխը կորցրած նարոդնիկությունը» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում է, որ մարքսիստական քննադատության շնորհիվ «ռուսական ռևոլյուցիոն միջավայրի վրա նարոդնիկական իդեաների ազդեցությունն ապշեցուցիչ արագությամբ նվազեց»[9]։

Ռուսական լեգալ նարոդնիկությունը միաձուլվեց իր ազգակից լիբերալ հոսանքին։

90-ական թվականների երկրորդ կեսից Եվրոպայում ծավալվում է ռևիզիոնիզմը՝ հանձինս Բերնշտեյնի, Բրաունի, Դավիթի և այլոց։ Ռևիզիոնիզմի գաղափարական զինանոցում կային այնպիսի զենքեր, ինչպես՝ դասակարգային պայքարի տեսության բացասումը, լիբերալիզմի և սոցիալիզմի սկզբունքային հակադրության ժխտումը, կապիտալիստական հակասությունների սրման փաստի ժխտումը, սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտության և պատմական անխուսափելիության տեսությունից հրաժարվելը, մանր տնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության բնագավառում, կենսունակության պնդումը և այլն։ Լեգալ նարոդնիկական գաղափարախոսները զինվեցին այդ ռևիզիոնիստական զենքերով և գրոհ բացին ռևոլյուցիոն մարքսիզմի դեմ։

Ահա այդ շրջանում էր, որ արևմտաեվրոպական բերնշտեյնականությունը, Վ. Ի. Լենինի բնորոշումով, ամրապնդեց և միաժամանակ ձևափոխեց լիբերալ նարոդնիկական հոսանքը։ Այդ ռևիզոնիստական, բերնշտեյնական գաղափարներով բեղմնավորված՝ լիբերալ նարոդնիկական հոսանքը Ռուսաստանում «ներքուստ հասունացավ՝ ազատագրվելով մի քանի պրիմիտիվ պատրանքներից ու ռեակցիոն կցորդներից»[10]։

Տեղի ունեցավ եվրոպական օպորտունիստական և ռուսական նարոդնիկական գաղափարների «մերձեցումն» ու «միաձուլումը»։

Դա բուրժուական լիբերալիզմի և լիբերալ նարոդնիկության նոր փուլն էր, որ ցայտուն արտահայտություն գտավ ռուս իրականության մեջ մինչև 900 թվականների սկիզբը, և որը իր դրսևորումն ունեցավ նաև հայ իրականության մեջ։

Մենք շարադրեցինք Վ. Ի. Լենինի ուսմունքը Ռուսաստանում ռևոլյուցիոն նարոդնիկության վերասերման պրոցեսի մասին, վերասերում, որ պատմականորեն տեղի ունեցավ անցյալ դարի ութսունական—իննսունական թվականներին։

Արդյոք այդ վերասերման պրոցեսը զուտ ռուսական երևույթ էր, թե նա իր արտահայտությունն է գտել նաև Անդրկովկասում, այդ թվում և հայ իրականության մեջ. այլ խոսքով վերը շարադրված լենինյան բնորոշումներն ու գնահատականներն այդ վերասերման պրոցեսի մասին տարածվում են արդյոք Անդրկովկասի և հայկական սոցիալական միջավայրի վրա։

Դեռևս երեք քառորդ դար սրանից առաջ՝ 1884 թ. Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերների Միության» օրգան «Ազատության ավետարեր»-ը հետևյալ ճիշտ գրությունն էր առաջադրում. «Պատմական հանգամանքներն այն-

---

[9] Լենին, Երկեր, հատ. 7, էջ 115։

[10] Նույն տեղում։

պես սերտ կապել են մեր ժողովրդի մի մասի կյանքը ռուս ժողովրդի կյանքի հետ, որ յուրաքանչյուր հետադիմական կամ առաջադիմական շարժում վերջինում ազդում է անմիջապես առաջինի կյանքի հոսանքի վրա»:

Իսկ դրանից տասը տարի հետո, «Կոմունիստական մանիֆեստ»-ի թարգմանիչ ու իննուսունական թթ. մարքսիստ Հովսեփ Ալթաբեկյանը 1894 թ. նոյեմբերի 1-ին Ֆ. Էնգելսին գրած իր նամակում իրավամբ նշում է, որ կովկասահայերի «պատմությունը, ինչպես նաև նրանց հեղափոխական շարժումը զուգընթաց է Ռուսաստանի պատմության»:

Այսպիսով, դեռևս ութսունական-իննսունական թվականներին հայ հասարակայնության առաջավոր տարրերը միանգամայն իրավացիորեն նշում էին այն ընդհանուր պատմական օրինաչափությունները, որոնց ենթակա էին թե՛ բուն Ռուսաստանը և թե՛ Անդրկովկասը, այդ թվում և հայ իրականությունը:

Եվ իրոք, ուսումնասիրելով ռևոլյուցիոն նարոդնիկության էվոլյուցիան Անդրկովկասում ու հայ իրականության մեջ, հանդում ենք այն եզրակացությանը, որ ռևոլյուցիոն նարոդնիկությունը մեզ մոտ էլ վերասերվեց լեգալ, լիբերալ նարոդնիկության, որ այդ վերասերման պրոցեսը հետևանք էր նույն սոցիալ-տնտեսական պայմանների և վերջապես հայ լեգալ նարոդնիկությունը կրել է իր վրա ռուս լեգալ նարոդնիկության քաղաքական ու տնտեսական գաղափարախոսության խիստ ազդեցությունը:

Հայ լեգալ նարոդնիկները կազմում էին մի ամբողջ խումբ, այդ թվում Ալեքսանդր Քայանթար, Հովսեփ Տեր-Մովսիսյան, Ստեփան Ղորդանյան, Դրաչյա, Մանվել, Դր. Յուզբաշյան, Ա. Ամիրյան, Լ. Սարգսյան և ուրիշներ: Սրանց գրվածքները լույս էին տեսնում 80-ական թվականներից սկսած մինչև իննսունական թվականները «Մշակ»-ում, «Մեղու Հայաստանի»-ում, «Բորբ» ամսագրում: Այս լեգալ նարոդնիկների զգալի մասը Մոսկվայի և Պետերբուրգի ուսանողներ էին, որոնք եղել են ռուս լեգալ նարոդնիկ տնտեսագետների Նիկոլայ-ոնի, Զոլոտարևի, Վ. Վ.-ի և ուրիշների գաղափարական ազդեցության տակ:

Անշուշտ, սա չի նշանակում, որ հայ լեգալ նարոդնիկները մեխանիկորեն կրկնում էին ռուս լեգալ նարոդնիկների դրույթներն ու տարածում Անդրկովկասում, հայ իրականության մեջ: Հայ լեգալ նարոդնիկներն հայտնաբերել են և իրենց ինքնուրույնությունը: Եվ դա հասկանալի է. այն չափով, ինչ չափով հայ լեգալ նարոդնիկները գործել են Անդրկովկասում, հայ իրականության մեջ, պարզ է, որ նրանք պետք է արձագանքեին ու անդրադառնային այդ իրականության կողմից առաջադրած հարցերին, հենց թեկուզ «հայկական հարց»-ին:

Հայ լեգալ նարոդնիկության մասին հետազոտություններ է կատարել առաջին հերթին պրոֆ. Վ. Ռշտունին:

Դեռ 1940 թ. հրատարակած «Հայ հասարակական հոսանքները և 1861—1864 – 1870 թվականների դյուղացիական ռեֆորմը» աշխատության մեջ պրոֆ. Վ. Ռշտունին հատուկ ենթագլուխ է հատկացրել հայ լիբերալ նարոդնիկական հայացքների ուսումնասիրության:

1946 թ. պրոֆ. Վ. Ռշտունին հրապարակում է իր «Հայ նարոդնիկ Հովսեփ Տեր-Մովսիսյանը» մենագրությունը, իսկ 1948 թվականին՝ «Հայ նարոդնիկական գաղափարախոսության պատմությունից» աշխատությունը:

«Ազատության ալմանակ», 1881 թ., № 1:

Վերջապես, 1956 թվականին պրոֆ. Վ. Ռշտունին լույս է ընծայում իր մեծածավալ աշխատությունը— «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» (XIX դարի երկրորդ կես, ետոնֆորմյան շրջան), որի երրորդ բաժինը հատկացված է մանրբուրժուական սոցիալիստական հոսանքին։

Պրոֆ. Վ. Ռշտունու հիշյալ աշխատություններում հանգամանորեն տրված է վերը բերած հայ լիբերալ նարոդնիկների հասարակական և տնտեսական հայացքների վերլուծությունը։

Կրկնությունից խուսափելու համար, ստորև մենք նպատակահարմար ենք համարում հայ լեգալ նարոդնիկների խմբից առանձնացնել Ստեփան Ղորղանյանին և վերլուծման ենթարկել նրա սոցիալ-տնտեսական հայացքները հետևյալ նկատառումներով։

1. Մեզ հաջողվեց ձեռք բերել նոր նյութեր Ստ. Ղորղանյանի մասին և այդ նյութերի հիման վրա նոր լույս սփռել Ստ. Ղորղանյանի թե՛ կենսագրականի և թե՛ գրական ու պրակտիկ գործունեության վրա և այդ իմաստով ինչ-որ նոր բան հաղորդել այդ ինքնատիպ հայ լեգալ նարոդնիկի մասին. 2. ի տարբերություն Ա. Քալանթարի, Հ. Տեր-Մովսիսյանի, Հրաչյայի և այլոց, Ստ. Ղորղանյանը չի սովորել Մոսկվայում, հաղորդակից չի եղել ռուս լեգալ տնտեսագետների ազդեցության տակ գտնված հայ ուսանողական խմբակի գործունեությանը. այդ իմաստով նա անշուշտ, բացառություն է և արժանի է առանձին ուշադրության։ Եվ վերջապես, երրորդ՝ ի տարբերություն այն հայ նարոդնիկների, որոնք տրամադրություն էին ցույց տալիս «սիրել գավառը միայն քաղաքում», Ստ. Ղորղանյանը գնաց գավառ, գնաց գյուղ և մնաց այնտեղ գրեթե մինչև իր կյանքի վերջը։

2. Ստ. ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփան Ալեքսանդրի Ղորղանյանը ծնվել է 1865 թվականին։ Նա Ղորղանյանների հայտնի տոհմից է։ Վրաց նշանավոր պատմագիր Վախուշտին պատմում է, որ Ղորղան աղան իր եղբայրների, որդիների և եղբորորդիների հետ գաղթել է Վրաստան 1415 թվականին, Հայաստանից՝ Ղորղան ամրոցից, որը գտնվում էր Սուրմալուի Իգդիրից ոչ հեռու։ Ընդունվելով վրաց ազնվականության շարքերը՝ Ղորղանը կալվածքներ է ստանում Սոմխեթիայում (Բորչալվի գավառում), ապա Թիֆլիսի մոտերքը—2 գյուղ՝ մեծ և փոքր Էնագիրի։ Վրաստանում նրանք վարել են պալատական և զինվորական պաշտոններ։

Վրաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Ղորղանյան տոհմի գրեթե բոլոր ճյուղերի ներկայացուցիչները մտան զինվորական ծառայության մեջ և հայտնի եղան Կովկասյան, ռուս-տաճկական, ռուս-պարսկական պատերազմներում։ Ստեփան Ղորղանյանի պապը, սրա եղբայրները—բոլորն էլ գեներալներ են եղել. գրանցից՝ գեներալ մայոր Գաբրիել Ղորղանյանի անունով է կոչվում Թիֆլիսի Ղորղանյան փողոցը, մի Ղորղանյանն էլ նկարագրված է Տոլստոյի «Հաջի Մուրադ» վեպում։

Ստեփան Ղորղանյանի հայրը Ալեքսանդր Ղորղանյանը մասնակցել է 1877—78 թվականի ռուս-տաճկական պատերազմին, եղել է Իգդիրի զինվորական կոմենդանտը, պատերազմից հետո անցել է քաղաքացիական ծառա-

յության և երկար տարիներ ապրել է Իգդիրում, որպես Սուրմալուի մաքսատան կառավարիչ։

Նա իր տղային՝ Ստեփանին և աղջկան՝ Սոֆյային (հետագայում Սոֆյա Դանիել-բեգ) տալիս է Թիֆլիսում ապրող գերմանացի բարոն Տիզենհաուզենի պանսիոնը և ապա Թիֆլիսի ռեալական դպրոցը։ Թե՛ Տիզենհաուզենի պանսիոնում և թե՛ ռեալական դպրոցում ուսանելիս, Ստ. Ղորդանյանը մեծ սիրով է համակվում դեպի Շիլլերը և Գյոթեն։ «Մշակում» տպագրված իր «Գավառական նամակների» համար, նա վերատառություն է ընտրում Գյոթեի խոսքերը „Alles nur gesuet, doch alles bleihf Zusagen" («Ամեն բան ասված է, բայց շատ բան է մնում ասելու»)։ «Գավառական նամակներում» հիշում է Շիլլերի խոսքերը, որ հինը քանդվում է, ժամանակները փոխվում են, «տարիքների միջից նոր կյանք է ծաղկում»։

Ըստ Ստեփան Ղորդանյանի՝ ռուսական գրականության ամենափայլուն դեմքերն էին Պուշկինը և Գոգոլը, նա սիրում էր Սալտիկով-Շչեդրինին, որից մեջբերումներ է արել իր «Գավառական նամակներում». տարվում էր Ինգելգարդի („Письма из деревни") աշխատությամբ։

Ստեփան Ղորդանյանի քույրը, Սոֆյա Դանիել-բեգն իր հիշողությունների մեջ՝ անդրադառնալով իրենց «իգդիրյան» կյանքի շրջանին, պատմում է, որ Ստեփան Ղորդանյանին շրջապատող մարդիկ ոգևորվում էին ֆրանսիական մեծ հեղափոխությամբ, Ժան-Ժակ Ռուսսոյով և Միքայել Նալբանդյանի «Ադատն ստված» արտասանությամբ։

Ստեփան Ղորդանյանը մեծ հակում ուներ դեպի հասարակագիտական, հումանիտար գիտությունները և մտադիր էր ռեալական դպրոցն ավարտելուց հետո մեկնել արտասահման և կատարելագործվել այդ ուղղությամբ։ Սակայն հայրը, Ալեքսանդր Ղորդանյանը չընդառաջեց որդու ցանկությանը։ Հավատարիմ ազնվական տրադիցիաներին՝ Ալեքսանդր Ղորդանյանը գերադասում էր «ավագ որդուն պետական ծառայության մեջ տեսնել — վարչական կամ զինվորական ասպարեզում»։

Չիջելով հոր ցանկությանը, Ստ. Ղորդանյանը ընտրում է վարչական ասպարեզը, բայց գավառում, որովհետև, ինչպես ինքն է նշում՝ «Մենք կատարելապես հափշտակվում էինք գավառական կյանքի իդեալով և այն իդեալներով, որ ստեղծում էր մեր երևակայությունը, մեր աշխարհի խորքերում... ձգտելով դեպի գավառը՝ մեր սիրտը բաբախում էր ավելի քան դրական կերպով»[12]։

Ստ. Ղորդանյանը համարում է դա, այսինքն ձգտումը դեպի գավառ, 80-ական թվականներին ստեղծված և տիրապետող հասարակական մթնոլորտի բնական արտահայտությունը։ «Գավառ գնալու ձգտումը,— նշում է Ղորդանյանը, ժամանակի ընդհանուր բնավորություն ուներ։ Դա մի վերին աստիճան միտիթարական, տենդային դրություն էր, որ շատ բնական էր ժողովրդական ուրբյան հարցի արծարծման օրով»[13]։

Եվ ահա 19 տարեկան Ստեփան Ղորդանյանը նշանակվում է Սուրմալվի գավառապետի օգնական, իսկ մեկ տարուց հետո, 1886 թվականի մայիսից, երբ արդեն բոլորում է նրա քսան տարին, նա սկսում է հրապարակել «Մշակում» իր «Գավառական նամակների» սերիան։

---

[12] «Մշակ», 1896, № 66, Նյութեր հասարակական կյանքից։

[13] Նույն տեղում։

Երեք տարի անց Սուրմալվից նրան փոխադրում են Հին Նախիջևան՝ որպես գավառապետի օգնական, 1895 թվականին՝ նույն պաշտոնով Նոր Բայազետի գավառ։ Որոշ ժամանակից հետո նա նշանակվում է Նոր Բայազետի գավառի գավառապետ և այդ պաշտոնում մնում է մինչև 1910 թվականը, ապա նշանակվում է Քութայիսի գավառապետ, իսկ 1915 թվականին՝ Ղարսի շրջանի պետ, մինչև 1918 թվականը, այսինքն մինչև տաճկական բանակի կողմից Ղարսի գրավումը, իսկ 1919—20 թվականներին Ղարսի քաղաքացիական մասի նահանգապետ։

Մեզ հետաքրքրող շրջանը, ինչպես այդ մասին հիշատակել ենք վերը, 80—90-ական թվականներն են, հետևաբար և մենք կարող ենք Ղորդանյանի կենսագրությունը բնութագրելիս առաջ չգնալ, և բավարարվել միայն այսքանով[14]։

Ստ. Ղորդանյանի գրական ժառանգությունը կազմված է գլխավորապես «Մշակ»-ում հրապարակված «Գավառական նամակներ» վերտառությունը կրող 28 հոդվածներից (1886—1917) և «Նյութեր հասարակական կյանքի ուսումնասիրության» հոդվածաշարքից, որ նա սկսեց տպել նույն «Մշակում»՝ սկսած 1896 թվականից։ «Գավառական նամակները» ծավալով մոտավորապես քսան տպագրական մամուլ է, իսկ «Նյութեր հասարակական կյանքի ուսումնասիրության» շուրջ երեք մամուլ։ Բացի դրանից Ստ. Ղորդանյանի գրչին են պատկանում երկու փոքրիկ բրոշյուրներ. „К характеристике местного дворянства“ и „Кочевки Эриванской губернии“.

Ստ. Ղորդանյանը հրապարակել է նաև երկու ուսումնասիրություններ քրդերի մասին։ Այդ ուսումնասիրությունները հրապարակված են „Ковкас“[15] և „Новое обозрение“[16] թերթերում։

Ղորդանյանը թողել է նաև մի շարք անտիպ աշխատություններ, այդ թվում մեծածավալ իր «Մեմուարները», որի մասին մենք խոսեցինք նրա կենսագրականում։

Մեր ուսումնասիրության նյութը «Մշակում» լույս տեսած «Գավառական նամակներն» են և «Նյութեր հասարակական կյանքի ուսումնասիրության» հոդվածները։

Ինչպես ասացինք Ղորդանյանը հրապարակել է իր «Գավառական նամակները» «Մշակում» 1886 թ. մայիսի 27-ից մինչև 1887 թվականի օգոստոսի 13-ը, որից հետո ամբողջ ինը տարի, մինչև 1896 թվականը տեղի է ունե-

[14] Հետաքրքրությունից զուրկ չեն մի շարք վկայություններ, որոնք բնութագրում են Ստ. Ղորդանյանին, որպես անկաշառ հայրենասեր և դաշնակցության վայրագ ռեժիմը մերկացնող անձնավորություն։ Այդ մերկացումը արել է Ստ. Ղորդանյանը իր հայտնի զեկուցագրում։ Այդ զեկուցագիրը գտնվում է Պետական արխիվում։ Ահա թե ինչ է գրում պրոֆ. Վ. Պարսամյանը այդ զեկուցագրի մասին. «Ավելի քան 35 էջից բաղկացած այդ զեկուցագիրը, որ ի դեպ, անփոխարեն մեր պետարխիվը պահել է առանց հրատարակման. իր զավեշտական մի շարք արտահայտություններով հանդերձ պարունակում է դաշնակցության համար ապանիչ տողեր, մերկացնում է դաշնակցական զորքի և խմբապետական բանակների անսանձ գործողությունները, թալանն ու բռնությունը, տեղական ադմինիստրացիայի քայքայող, ավերող դերը, պարզում է ազգային փորձամասնությունների հալածական վիճակը, Օլթիի քարածուխը գրավելու դաշնակցության տենչերը և հարակից մի շարք կարևոր խնդիրներ», Վ. Պարսամյան «Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում», Երևան, 1932, էջ 100։

[15] С. Корганов „Несколько слов о Курдах“. „Кавказ“, 1884, № 239 и № 268.

[16] С. Корганов „О курдах“. „Новое обозрение“, 1885, № 391.

նում ընդմիջում։ Վերսկսելով իր թղթակցությունը 1896 թ. վերջին, իններորդ նամակը նա հրապարակում է 1900 թ. սեպտեմբերի 30-ին։ Մեզ հետաքրքրող շրջանը հենց այդ շրջանն է (1886—1900 թթ.), որովհետև այդ ժամանակամիջոցում տպագրված նրա «Գավառական նամակները» բացահայտում են հայ լեգալ նարոդնիկության տնտեսական հայացքները, թե՛ ռուսական նարոդնիկության հետ ունեցած ընդհանուր գծերով և թե՛ իրենց առանձնահատկություններով։

1900 թվականից հետո լույս տեսած «Գավառական նամակները» արդեն քիչ են պարունակում զուտ տնտեսական բնույթի հարցեր. ահա թե ինչու մենք մեր ուշադրության կենտրոնում ունենալու ենք 1886—1900 թթ.-ի «Գավառական նամակները»։

3. Ստ. ՂՈՐՂԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ներկա հոդվածի ծավալը հնարավորություն չի տալիս շարադրելու Ստ. Ղորդանյանի հասարակական և տնտեսական հայացքների մանրակրկիտ վերլուծությունը։

Ստորև մենք տալիս ենք մեր եզրափակումներն այդ ինքնատիպ հայ լեգալ նարոդնիկի հայացքների մասին։

Առաջին հարցը դա Ստ. Ղորդանյանի վերաբերմունքն է դեպի 1861 թ. գյուղացիական ռեֆորմը և 1870 թթ. շինական ռեֆորմը և շինական կանոնադրությունը։ Այս հարցում Ղորդանյանի գնահատականի մեջ կա անվիճելի հակասություն։ Ստ. Ղորդանյանը գտնում է, որ շինական ռեֆորմի նպատակն ուրիշ է, իսկ ռեֆորմի գործադրությունը, նրա իրականացման հետևանքը՝ ուրիշ։ Ըստ Ստ. Ղորդանյանի շինական ռեֆորմի նպատակն էր կանոնավորել հողային հարցը և վերականգնել գյուղացու բռնագրաված իրավունքները, մինչդեռ իրականում շինական ռեֆորմը «իր տեղիսի նպատակի հակառակ աճեցրեց մեր երկրի մեջ բեգերի, աղալարների տարրը»։ Նույնպես և 1870 թվականի շինական կանոնադրությունը «բոլորովին բացասական նշանակություն ունեցավ մեր երկրի համար»։

Այդ հակասությունը նշանակալից էր լեգալ նարոդնիկի համար։ Ռևոլյուցիոն նարոդնիկը գտնում էր, որ գյուղացիության թշվառությունը, կեղեքումը, տարոտահարումը, գյուղական համայնքի քայքայումը գալիս է 1861 թվականի շինական ռեֆորմից և պետք է ոչնչացնել այդ ռեֆորմը և նրա հեղինակին՝ ցարական ինքնակալությանը, որ ռեֆորմի նպատակի և իրագործման արդյունքի մեջ ոչ մի աննկարագրելի հակասություն չկա։ Մինչդեռ լեգալ նարոդնիկը կասկածեց մի այնպիսի ծրագրի, որի նպատակն էր պահպանել ժամանակակից հասարակության հիմքերը, պահպանել ցարական ինքնակալությունը, «բարեմիտ կառավարությունը» և գոյություն ունեցող ռեժիմի սահմաններում «կարկատել», «բարելավել» գյուղացիության դրությունը։

Ըստ լեգալ նարոդնիկների 1861 թվականի շինական ռեֆորմն արդյունք էր «մեծ կայսրի մեծ բարիքի», և եթե բացասական հետևանքներ բերեց այդ ռեֆորմը, ապա մեղավորությունն ընկնում է կիրառողների վրա և ոչ թե ռեֆորմի հեղինակի վրա։

Այսպիսով, 1861 թվականի ռեֆորմի նպատակի գնահատման գործում Ստ. Ղորդանյանն հետևում է ռուս լեգալ նարոդնիկների ու լիբերալների, ինչպես նաև հայ լիբերալների օրինակին։

Սակայն 1861 թվականի շինական ռեֆորմի, 1864 թ. դատաստանական ռեֆորմի ինչպես նաև 1870 թ. շինական կանոնադրության կիրառման արդյունքների բացահայտման ասպարեզում Ստ. Ղորդանյանը հայտնաբերում է այնպիսի ինքնատիպություն, այնպիսի գիտակություն գավառական, գյուղական կյանքի մասին, այնպիսի մերկացումներ է անում ցարական ռեժիմի, ցարական ադմինիստրացիայի նկատմամբ, որպիսին մենք չենք հանդիպում 80—90-ական թվականների հայ պարբերական լեգալ մամուլում:

Եվ հենց դրանումն է կայանում այն դրականը, որ կա Ստ. Ղորդանյանի դրական արտադրանքի մեջ: «Գավառական նամակները» ընթերցողի առաջ բացում են գեղծումների, կաշառակերության, բռնի ուժի տիրապետության մի սոսկալի աշխարհ: Գյուղական կյանքի բոլոր ասպարեզներում թագավորում է գեղծումն ու կաշառքը. նման իրականությունը արմատավորում է գյուղացիության դիտակցության մեջ մի համոզմունք, որ կաշառքը և օրենքը սինոնիմներ են: Հողաբաժանման հանձնաժողովների անդամները, միրաբները, սաբալախչիները, գյուղի գրագիրը, տանուտերը, դատավորը, ոստիկանը, հաշտարար դատավորը, ապա վերադաս ադմինիստրատիվ և դատական օրգանների ներկայացուցիչները—բոլորը «ծծում են գյուղացու արյուն-քրտինքով աշխատածը», բոլորի նպատակն է «կեղեքել, հարստահարել և աջ ու ձախ հրնձել»: Որոշ իմաստով կարելի է ասել, որ 80—90-ական թվականների լեգալ հրապարակախոսության մեջ Ստ. Ղորդանյանը իր մերկացումներում յուրատեսակ Պոռշյան է:

Երկրորդ հարցը—դա Ստ. Ղորդանյանի վերաբերմունքն է դեպի համայնական հողատիրությունը: Նշենք մի ուշագրավ երևույթ: «Գավառական նամակներից» մեկում Ստ. Ղորդանյանը գտնում է, որ չպետք է խառնել հողատիրության իրավունքը հողօգտագործման իրավունքի հետ, կամ «հողի տիրապետության գաղափարը և հողից օգտվելու իրավունքը»:

80-ական թվականներին արտահայտած այս միտքը կամ այս երկու հասկացողությունների նման սահմանազատումը անշուշտ, գրական գիտական քայլ է: Սակայն պետք է նշել, որ Ստ. Ղորդանյանը միշտ չէ, որ հավատարիմ է մնում այդ երկու հասկացողություններին տված իր բնորոշմանը: Հողային հարցը վերլուծելիս նա շեշտը դնում է հողօգտագործման ձևերի վրա և ոչ թե հողատիրության կամ հողային սեփականության ձևերի վրա: Նա գտնում է, որ մեզ մոտ տիրապետողը «համայնական հողատիրությունն է», որ «ջրի տիրապետությունը մեր երկրում, ինչպես և հողատիրությունը համայնական է»: Փաստորեն Ստ. Ղորդանյանը խոսում է հողօգտագործման ձևի մասին և ստվերի մեջ է թողնում հողատիրության, հողի սեփականության— (մասնավորապես պետական) հարցը: Համենայն դեպս պարզ ու որոշ չի դրված ֆեոդալական կալվածատիրական հողատիրության ոչնչացումը և հողը ժողովրդի սեփականություն դարձնելու հարցը: Հողի, ջրի, արոտավայրերի օգտագործման համայնական ձևի կողմնակից է Ստ. Ղորդանյանը. օգտագործման համայնական ձևը նա համարում է «ժողովրդի վաղնմի, նվիրական ինստիտուտ», «ավանդություններով ամրացած մի սրբություն»: Հողը, ջուրը, արոտատեղիները «հավասար կերպով բաժանվելու են երկրի բնակիչների մեջ», նշում է Ստ. Ղորդանյանը: Խոսքն անշուշտ վերաբերում է ոչ թե հողը, ջուրը արոտատեղիները մասնավոր սեփականություն դարձնելուն, այլ հողից, ջրից, արոտատեղիներից օգտվելը պետք է հիմնվի շնչի վրա և այդ իմաստով հավասարության սկզբունքի հիման վրա:

Երրորդ հարցը — դա Ստ. Ղորդանյանի վերաբերմունքն է գեպի գյուղի շերտավորումը: Թեև Ստ. Ղորդանյանն այս թեման ուսումնասիրությունն հատուկ նյութ չի դարձնում իր «Գավառական նամակներում», բացի մի երկու տեղ ճիշտ կերպով բացահայտում է այդ շերտավորման պրոցեսը: Նա հաղորդում է, որ շնորհիվ գյուղ սողոսկած «կեղծ քաղաքակրթության», տեղի է ունենում հողերի կենտրոնացում մի բևեռում և պրոլետարիատի առաջ գալը մյուս բևեռում: Մի այլ տեղ նա նշում է, որ «ժողովրդի հարստությունը կենտրոնանում է, փոխանակ ապակենտրոնանալու»: Սակայն այդ պրոցեսի խոր պատճառները նա չի ուսումնասիրում. նա փաստն է արձանագրում: Նրան մտահոգությունն է պատճառում շերտավորման մի կողմը. դա գյուղական պրոլետարիատի առաջանալն է, պրոլետարիատի, որ ստիպված դիմում է «ներքին դաղթականության» կամ պանդխտության: Ի տարբերություն այլ հրապարակախոսների, Ստ. Ղորդանյանն այդ երևույթի պատճառը տնտեսականն է համարում. սակավահողությունը, կամ այդ սակավ հողերի արդյունաբերության պակասելը: Ելքը որոնելիս Ստ. Ղորդանյանը պահ մի ուշադրությունը հասում է ադալարների, բեգերի կասկածելի հողային սեփականության վրա, սակայն հետևողական եզրակացություններ չի հանում և հարցի կարգավորումը թողնում է «բարեմիտ կառավարությանը»: Ավելին, 900-ական թվականներին նորից անդրադառնալով 1864 թվականի շինական դատաստանական ռեֆորմներին. նա գտնում է, որ ժողովուրդը դեռևս «հասունացած չէր» այդ ռեֆորմների տված բարիքները վայելելու:

Լեգալ նարոդնիկության և լիբերալիզմի կոնցեպցիաների համընկնումը միանգամայն բացահայտ է:

Ստ. Ղորդանյանի ավանդը լեգալ նարոդնիկական հրապարակախոսության ասպարեզում՝ ցարական դեղծարար ու կաշառակեր ռեժիմի մերկացումն է գյուղում և գավառում: Եվ պատահական չէ, որ 1917 թ. փետրվարյան ռևոլյուցիայից հետո, երբ գավառում ամեն ինչ տակն ու վրա էր լինում, ռևոլյուցիոն ընդվզումներին զուգընթաց ծայր էին առնում գողությունը, սպանությունները, հափշտակումները, բռնությունը և երբ ամեն գավառից ու շրջանից զորք էին պահանջում «կարգը վերականգնելու», Ստ. Ղորդանյանը, հարկավ, իր անձնական փորձը նկատի առնելով գրում է. «Մեկը պրիստավը, երկու ձիավորով ավելի լավ է կառավարել գավառամասը, քան նրա հարևան պամպադուրը՝ 100 կոդակով»[17]:

Ո՞ր սոցիալական խավերի արտահայտիչն էր Ստ. Ղորդանյանը, ո՞ւմ շահերն էր պաշտպանում թե՛ իր տնտեսական հայացքներում և թե՛ պրակտիկ գործունեության ընթացքում:

Հետադարձ հայացք ձգելով 80—90-ական թվականներին, Ստ. Ղորդանյանը հետևյալն է հայտնում. «Ինձ հաջողվեց տեսնել մեր երկրի ժողովրդական տենչանքների վաղորդյան շրջանը: Հին բանվում էր և նրա անձև փլատակների տակ ծլում էր նոր տրամադրություն և կյանքի նոր ինտերես»[18]: Նա այդ պրոցեսը համարում է «շրջող հեռանկար», որով տարված էր ու հափշտակված մեր երիտասարդությունը. «Գավառը և գոնեհիկը դալիս էին տիրելու հասունացող սերունդների ամբողջ էությունը»[19]:

[17] «Մշակ», 1917, № 162:
[18] Նույն տեղում, 1918, № 211:
[19] Նույն տեղում:

Ութսուն և 90-ական թվականներին կապիտալիզմն իր հաղթական երթն էր անում՝ նաև գյուղում. հինը, նահապետականը քանդվում էր, առաջ էին գալիս նոր հարաբերություններ, նոր արամադրություն: Պատմական շրջադարձային կետ էր ապրում մեր երկիրը:

Երևանի աշխատավոր գյուղացին՝ պոկ գալով ու լքելով հին նահապետական կյանքի ափերը, լողում էր դեպի նոր կյանքի ափեր, հանդիպելով իր ճանապարհին անսպասելի խութերի ու սպառնալից երևույթների:

Եվ ահա «հավատացող ու երազող» մի բանակ է նետվում դավառ երիտասարդությունից, օգնություն գալու այդ աշխատավոր գյուղացիությանը, այդ մանր արտադրողին: Այդ «մեծագործուկ» բանակումն էր նաև Ստ. Ղորղանյանը 1885 թվականին: Նա տարված ու հափշտակված ուսումնասիրում է գավառը, առանց դունապարդելու հաղորդակից է անում ընթերցողին իր «տեսածին ու լսածին», «փրկագոտի» է նետում գյուղացիությանը: Այդ փրկագոտին հինավուրց և սրբազան «համայնական հողատիրության կանոնավոր ոգությունն էր», «ժողովրդի հարստության ապակենտրոնացումը», հողի և ջրի «հավասար» բաժանումը: Բայց սրանք արդեն «խունացած» հանգրվաններ էին:

Հետաքրքրությունից դուրս չէ Ստ. Ղորղանյանի գրեթե երևանյան գավառապետական պրակտիկ գործունեությունը: Թվենք մի քանի ձեռնարկումներ, որոնց նախանձախնդիր է եղել նա. 1907 թվականին Նոր Բայազետում կաթնատնտեսական ֆերմայի կամ դպրոցի հիմնադրման հարցն էր արծարծվում: Ալեքսանդր Բալանթարի նախաձեռնությամբ հրավիրվում է հատուկ խորհրդակցություն՝ քննարկելու կաթնատնտեսական դպրոցի հարցը. «Խորհրդակցությանը,— գրում է Ալեքսանդր Բալանթարը,— ներկա էր գավառապետ Ստ. Ղորղանյանը, որը սրտին շատ մոտ ընդունեց քննարկվող հարցը»[20]: Մեկ ուրիշ ձեռնարկում. Սևանա լճի ձկնորսությունը միշտ մեծ պետք է ունենար մեծաքանակ պարանի, որը ստացվում էր Ռուսաստանից. «Ես,— գրում է հետագայում Ղորղանյանը,— փորձեցի պարանը պատրաստել տեղական նյութից և ինձ վրա վերցրի պարան պատրաստելու գործարան հիմնելը»[21]: Այնուհետև Սևանա լճի ձկան արտահանման համար գրագրության մեջ է մտնում հայտնի իխտիոլոգ պրոֆ. Դրիմի հետ՝ Սևանա լճի ափերին կոնսերվի գործարան հիմնելու:

Հետաքրքիր է Ղորղանյանի մի ուրիշ ձեռնարկում. նա տպագրում է. «Ա. Իվ. Մանթաշյանին պաշտոնական նամակ գրեցի՝ հրավիրելով նրան նավթնացությունը հիմնել այն լճակի վրա, որի շուրջը հանդչում են հայության շահերը»[22]: Կամ մի այլ տեղ՝ Նոր Բայազետի շրջանում շատ բուրդ կար. «Փորձեցի գորգագործության մի արհեստանոց հիմնել ուսումնարանիկից և Դարալագյազից մի գորգագործ վարպետ բերեցի»[23]: Վերջապես նույն Նոր Բայազետում գավառապետ եղած ժամանակ «լեռներով փորձեցի խճուղի անցկացնել դեպի Դարալագյազ և Նոր Նախիջևան»[24]: Ձեռնարկումներ էին սրանք, որոնք նպաստակ տվեցին ծավալվող ապրանքային տնտեսության, կապիտալիստական տնտեսու-

[20] Л. Калантар, Инструкторское деятельность по молочному хозяйству в Закавказье в 1907 г., Тифлис, 1907, стр. 24.

[21] «Մշակ», 1918, № 221:

[22] Նույն տեղում:

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում:

թյան զարգացման պայմաններում, ինչպես ռուս լեգալ նարոդնիկները — դարկ տալ «ժողովրդական արտադրության» կամ «ժողովրդական արդյունաբերության» զարգացմանը, որը ըստ լեգալ նարոդնիկական տնտեսագիտական կոնցեպցիաների, պետք է զերծ պահեր գյուղացիությունը արևմտյան տիպի կապիտալիզմի ոլորտ մտնելուց և կասեցներ գյուղի շերտավորումն ու պրոլետարիզացիան։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել ժողովրդական կամ մանր արտադրության հայ լեգալ նարոդնիկական տեսության մի վարիանտի վրա։

* * *

Վերը մենք շարադրեցինք ռուս լեգալ նարոդնիկների դրույթն այն մասին, որ մանր և խոշոր արտադրությունն իրար հակադիր են, իրար հակասում են. այստեղից էլ նրանց այն հետևությունը, թե ժողովրդական մանր արտադրությունը հակասում է կապիտալիստական արտադրության, և որովհետև Ռուսաստանում բացարձակ գերակշռողը ժողովրդական մանր արտադրությունն է, իսկ կապիտալիստական արտադրությունը չնչին, ապա նա (կապիտալիստական արտադրությունը) արհեստական է և ոչ բնական։ Եվ այդ պատճառով էլ պետք է զարկ տալ միայն ժողովրդական մանր արտադրության զարգացմանը։ Այս գաղափարների արձագանքները մենք գտնում ենք նաև 80—90-ական թվականների հայ լեգալ նարոդնիկների գրվածքներում։

Այս հարցին է նվիրված «Գործ» ամսագրի 1883 թվականի առաջին համարում լույս տեսած ՀՏՐ-ի ծավալուն հոդվածը։

Նշելով, որ արդյունագործական արդյունահանումը բազմազան ձևեր է ընդունում, որը կախված է կապիտալի և աշխատանքի զանազան ձևի միավորվելուց և աշխատանքի ազատ լինելուց, հոդվածագիրն այնուամենայնիվ գտնում է, որ «այս զանազան տեսակները (ձևերը) կարելի է երկու դասակարգի բաժանել՝ ա. մեծաքանակ և բ. փոքրաքանակ արդյունագործություն։ Առաջին ձևին պատկանում են գործարաններն ու մանուֆակտուրան, իսկ երկրորդին՝ արհեստաններն ու տնային արդյունագործությունը»[25]։

Գտնելով, որ արդյունագործության այս կամ այն ձևի տարածումը կախված է տվյալ երկրի քաղաքական և տնտեսական զարգացումից, ՀՏՐ-ն հարց է տալիս. «թե արդյունագործության որ ձևը առավել հարմար է Անգրկովկասում և Հայաստանում»։ Ըստ հոդվածագրի, այս հարցին «կյանքն է պատասխանում», որովհետև «դժվար է գտնել Անդրկովկասում մի տեղ, ուր տարածված չլիներ որևէ տնային արդյունագործություն»։ Հայ լեգալ նարոդնիկը նույնպես պնդում է, որ ժողովրդական տնտեսության մեջ գերակշռողը — տնային արդյունագործությունն է, որ նրա տեսակարար կշիռը մեր երկրում գերազանց է և այդ պատճառով էլ նա պետք է գտնվի հասարակայնության և կառավարության ուշադրության կենտրոնում։

Այդ տնային արդյունագործությունից էլ, ըստ ՀՏՐ-ի կարծիքի, «ավելի նշանակություն ունի գյուղական տնային արդյունագործությունը, որը պատմականորեն առաջանում և զարգանում է կամ որպես լրացուցիչ միջոց

[25] «Գործ», 1883, № 1, էջ 2։

գյուղացու տնտեսական ծախքերի, կամ թե որպես հետևանք հողային և կլիմայական պայմանների (վուշ, քաթան և այլն)։

Հոդվածագիրն այլ տեսական ընդհանրացումներ էլ է անում. նա դիմում է պատմական փորձին և այն հետևությունն է հանում արդյունաբերության զարգացման ընթացքի մասին, թե պատմության մեջ նկատում ենք երկու երևույթ. արտակենտրոնացում, «որպես արդյունագործության օգտավետության հետևանք» և կենտրոնացում— «որպես զանազան անհաջող հանգամանքների դեմ մրցելու միջոց»։ Բնական և ողջունելին, ըստ հոդվածագրի, առաջինն է (արտակենտրոնացում), որը հանդիսանում է մանր արդյունագործության զարգացման արտահայտությունը։

Սակայն «կապիտալի անզուսպ ճնշման ներգործությունից» գյուղական արդյունագործությունն անկում է ապրում և որ ամենագլխավորն է, գյուղացի արդյունագործի առաջ պրոլետարիատ դառնալու ահավոր ուրվականն է կանգնած, «ո՞ւր է ելքը», ո՞վ պետք է կանխի այդ սպառնալից հեռանկարը— ահա թե ինչն է անհանգստացնում մեր լեգալ նարոդնիկին։

Ի՞նչ ելք է առաջարկում նա. որտեղ է փրկությունը. «Գյուղացի արդյունագործը շատ լավ է հասկանում, որ առանձին աշխատելով նա չի կարող գործարանի հետ մրցել, որ նա շատ թույլ է, բայց նա նմանապես լավ է հասկանում և այն, որ մենակ իրենք ոչինչ չեն կարող անել, թե հարկավոր է մի առաջնորդ, որ միացներ նրանց, կազմեր նրանցից ընկերություններ»։

Ռուսաստանում կառավարությունն է օգնում և օժանդակում արդյունագործներին։ «Մեզ մոտ էլ կառավարությունը պետք է օգնի գյուղացուն այդ գործում... միթե կառավարությունը չի պահպանի անկումից թույլ գյուղացի արդյունագործներին, որոնք իրենց ուսերի վրա են տանում հասարակական ամենադժվար տուրքերը»։

Այսպիսով տեսնում ենք, որ «ժողովրդականն» արտադրության խնդրում մանր և խոշոր արտադրության հակադրման հարցում, ինչպես նաև մանր արտադրության— գյուղացիական արդյունագործության կառավարության կողմից հայտնաբերվելիք օժանդակության և պաշտպանության հարցում, հայ լեգալ նարոդնիկները լիովին ձայնակցում էին ռուս լեգալ նարոդնիկ տնտեսագետներին և հենվում նրանց հեղինակության վրա։

Թվարկելով Ստ. Ղորղանյանի պրակտիկ գործունեությունը, նկատում ենք, որ այդ գործունեությունը կամ վերը բերած նրա ձեռնարկումները ամբողջովին նպաստում են կապիտալիզմի զարգացմանը։

Եվ դա միանգամայն օրինաչափ երևույթ է ու միանգամ ևս հաստատում է Վ. Ի. Լենինի լեգալ նարոդնիկության տված գնահատականը։

Վ. Ի. Լենինը գրում է, որ «բացարձակապես սխալ կլիներ ժխտել ամբողջ նարոդնիկական ծրագիրն՝ առանց խտրության։ Նրա մեջ պետք է տարբերել նրա ռեակցիոն ու պրոգրեսիվ կողմերը»[26]։

Նարոդնիկը —դա մանր արտադրողի, մանր բուրժուազիայի ներկայացուցիչն է։ Մանր բուրժուան իր տնտեսական դրությամբ՝ երկյակ է, երկդիմի Յանուս։

Մանրբուրժուական իդեոլոգը—նարոդնիկը—տեսության մեջ նույնպես երկդիմի է։ Դիմադարձ դեպի անցյալը—նրա ռեակցիոն կողմն է, դիմադարձ դեպի կապիտալիստական ուղիով զարգացումը—նրա պրոգրեսիվ կողմն է։

[26] Լենին, Երկեր, հատ. I, էջ 646։

Նարոդնիկության ռեակցիոն կողմը հին նահապետական, համայնական հողատիրության և հողի անոտարելիության քարոզն է, դրամական տնտեսության զարգացման կասեցման քարոզը, «հասարակության» ու բյուրոկրատիայից ապասելիք արմատական բարեփոխումների քարոզը և այլն:

Նարոդնիկության պրոգրեսիվ կողմը գյուղատնտեսական տեխնիկայի բարելավման, էժան վարկի, վաճառականության կարգավորման, գյուղական ինքնավարության, գրագիտությունը, գիտությունը ժողովրդի մեջ տարածելու պահանջներն ու ձեռնարկումներն են:

Իր 1905 թ. գրած «Նարոդնիկությունից դեպի մարքսիզմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը նշում է, որ նարոդնիկական ինտելիգենցիան, «իր արտելներով, կոոպերացիաներով, խոտացանությունների, գութաններով, զեմստվային պահեստներով, բանկերով երևակայում էր պաշտպանել «աշխատավորական տրադիցիաները և կլանքի ձևերը», իսկ իրականում պաշտպանեց կապիտալիզմի զարգացումը համայնքի ներսում»[27]: Եվ դա պրոգրեսիվ երևույթ էր:

Այդ առումով բացառություն չէր կազմում և նայ լեգալ նարոդնիկական մտավորականությունը և նրա ներկայացուցիչ Ստեփան Ղորդանյանը:

[27] Լենին, երկեր. հատ. 8, էջ 92: